



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ**  
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

18.05.2022թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 375-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՆՔԻ ՏԱՓ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 12/25 ՀԱՍՑԵՆՈՒՄ ԱՐՏԱԿ ԳԱԼՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 0.00597 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ 59.7ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-397-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. «Պետական համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» հ.731-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ-ի 07/04/2022թ. N Ս-22-33 եզրակացությունը, և ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի բնակիչ Արտակ Գալստյանի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 654 դիմումը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամաս թիվ 12/25 հասցեում Արտակ Գալստյանի կողմից ինքնակամ կառուցված 59.7քմ արտաքին /49.4քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասում, ճանաչել օրինական և համարել համայնքի սեփականությունը՝ առանձնացնելով 0.00597հա մակերեսով սպասարկման հողամաս:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառնությունների իրականացումը:



**ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**